տարման ապահովումը,

գ) ՀՀ պաշտոնական լեզվի՝ գրական հայերենի կանոնարկումը և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում նրա լիակատար գործածության ապահովումը,

դ) ՀՀ ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքների ապահովումը,

ե) ՀՀ տարածքից դուրս բնակվող հայերի շրջանում հայերենի տարածումն ապահովելը:

Տեսչության գործառույթները.

Տեսչությունը՝

ա) վերահսկում է «Լեզվի մասին» ՀՀ օրենքի պահանջների իրականացումը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, սպասարկման առանձին ոլորտներում աշխատող ՀՀ քաղաքացիների, կրթական համակարգի ուսումնական հաստատությունների, օտարերկրյա պետական մարմինների, հիմնարկների և կազմակերպությունների, ազգային փոքրամասնությունների և այլ սուբյեկտների կողմից,

բ) վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝ պատասխանատվության միջոցներ կիրառելու համար լեզվական օրենսդրության խախտումների վերաբերյալ նյութեր է նախապատրաստում և ներկայացնում դատարան, կազմակերպում է լեզվական քաղաքականությանը վերաբերող հարցերին նվիրված խորհրդակցություններ, գիտաժողովներ ու այլ միջոցառումներ, իրականացնում է այլ գործառույթներ:

Կոնտակտներ.

Տեսչության պետ՝ **26-68-60,**

Լեզվական վերահսկողության բաժին՝**26-68-79,**
Վարչական իրավախախտումների բաժին՝ **26-68-94:**

ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԼԵԶՎԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ

Լեզվի բնագավառում օրենսդրության խախտման համար նշանակվում է տույժ քաղաքացիների և պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հետևյալ դեպքերում և չափերով.

ա) պաշտոնատար անձանց, ինչպես նաև սպասարկման առանձին ոլորտներում աշխատող ՀՀ քաղաքացիների հայերենին չտիրապետելը՝

պաշտոնատար անձանց համար՝ **100.000-ից 150.000 դրամ**, իսկ մյուսների համար՝ **30.000-ից 50.000 դրամ:**

բ) ուսումնական հաստատություններում հայոց լեզվի ընդունելության քննությունը (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի) չապահովելը՝

քաղաքացիների համար՝ **80.000-ից 100.000** (կրկնվելու դեպքում՝ **120.000-150.000) դրամ**, իսկ պաշտոնատար անձանց համար՝ **100.000-ից 150.000** (կրկնվելու դեպքում՝ **200.000-300.000)** դրամ:

գ) գործավարությունը ոչ հայերեն վարելը, ցուցանակները, ձևաթղթերը, դրոշմանիշերը, նամականիշերը, կնիքները, միջազգային փոստային ծրարները, գովազդները ոչ հայերեն ձևավորելը՝

քաղաքացիների համար՝ **50.000-ից 80.000** (կրկնվելու դեպքում՝ **80.000-150.000) դրամ**, իսկ պաշտոնատար անձանց համար՝ **100.000-ից 200.000** (կրկնվելու դեպքում՝ **200.000-300.000) դրամ:**

դ) զանգվածային միջոցառումների ժամանակ ոչ հայերեն ելույթների համաժամանակյա թարգմանությունը չապահովելը՝

քաղաքացիների համար՝ **50.000-ից 100.000** (կրկնվելու դեպքում՝ **100.000-150.000) դրամ,** իսկ պաշտոնատար անձանց համար՝ **80.000-ից 150.000** (կրկնվելու դեպքում՝ **100.000-150.000) դրամ:**

ե) միջազգային ատյաններում ՀՀ ներկայացնող անձանց ոչ հայերեն պաշտոնական ելույթները, ՀՀ-ում գտնվող արտասահմանյան պետական մարմինների և կազմակերպությունների պետական վերահսկողության ենթակա փաստաթղթերը հայերենով չզուգակցելը՝

նախազգուշացում կամ տուգանք՝ 30.000-ից 50.000 դրամի չափով:

Սույն տեղեկատվական թերթիկը պատրաստվել և հրատարակվել է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի (հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 7, բն. 2, հեռ.՝ 540199, www.ayla.am) կողմից՝ PriceWaterHouseCoopers-ի և ՀՀ կառավարության կողմից իրականացվող «Հայաստան. Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի» շրջանակներում՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի օժանդակությամբ:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՎԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Սույն թերթիկում համառոտ տրվում է լեզվի բնագավառում պետության կողմից վարվող քաղաքականության, լեզվի բնագավառի իրավական կարգավորման, պետական կառավարման, վերահսկողության, Լեզվի պետական տեսչության նպատակների և գործառույթների, քաղաքացիների և իրավաբանական անձանց լեզվական պարտականությունների և պատասխանատվության, ինչպես նաև հարակից այլ հարցերի վերաբերյալ:

Հունիս 2005

ԼԵԶՎԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԼԵԶՎԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ-ում լեզվի բնագավառը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով:

«Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է»: ՀՀ Սահմանադրություն, հոդված 12:

«Լեզվի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ **«Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է, որը սպասարկում է հանրապետության կյանքի բոլոր ոլորտները: Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզուն գրական հայերենն է»:**

Կրթության լեզուն.

ՀՀ տարածքում գտնվող կրթական և ուսումնական համակարգերում դասավանդման եւ դաստիարակության լեզուն **գրական հայերենն է**:

ՀՀ բոլոր միջնակարգ-մասնագիտական, մասնագիտական-տեխնիկական և բարձրագույն ուսումնական հաստատություններում **հայոց լեզվի ընդունելության քննությունը և հայոց լեզվի ուսուցումը պարտադիր են:**

ՀՀ ազգային փոքրամասնությունների համայնքներում հանրակրթական ուսուցումը և դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով՝ պետական ծրագրով և հովանավորությամբ, **հայերենի պարտադիր ուսուցմամբ:**

Քաղաքացիների լեզվական պարտականությունները.

Պաշտոնատար անձինք և սպասարկման առանձին ոլորտներում աշխատող ՀՀ քաղաքացիները **պարտավոր են տիրապետել հայերենին:**

ՀՀ-ը ներկայացնող անձանց պաշտոնական ելույթների լեզուն հայերենն է, եթե դա չի հակասում տվյալ միջազգային ատյանում ընդունված կարգին:

Պաշտոնական խոսքում ՀՀ քաղաքացիները պարտավոր են ապահովել **լեզվի անաղարտությունը:**

Հաստատությունների լեզվական իրավունքները և պարտականությունները.

ՀՀ պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները պարտավոր են.

ա) գործավարությունը կատարել հայերեն,

բ) համագումարներում, նստաշրջաններում, ժողովներում, գիտաժողովներում, հրապարակային ատենախոսությունների և պաշտոնական ու զանգվածային այլ միջոցառումների ժամանակ ապահովել ոչ հայերեն ելույթների զուգահեռ հայերեն թարգմանությունը,

գ) ցուցանակները, ձևաթղթերը, դրոշմանիշերը, նամականիշերը, կնիքները, միջազգային փոստային ծրարները ձեւավորել հայերեն՝ անհրաժեշտության դեպքում զուգակցելով այլ լեզուներով:

ՀՀ տարածքում գտնվող արտասահմանյան պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները պարտավոր են պետական վերահսկողության ենթակա օտարալեզու փաստաթղթերը զուգակցել հայերենով:

ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների կազմակերպություններն իրենց փաստաթղթերը, ձևաթղթերը, կնիքները ձևավորում են հայերեն՝ իրենց լեզվով զուգահեռ թարգմանությամբ:

ՀՀ տարածքում հեռարձակվող հեռուստառադիոհաղորդումների լեզուն **հայերենն է**: Հեռուստառադիոընկերությունները **պարտավոր են** ապահովել իրենց հաղորդումների **լեզվի անաղարտությունը**:

Օտար լեզուներով հեռուստառադիոհաղորդումները, գեղարվեստական, վավերագրական և մուլտիպլիկացիոն կինոնկարները, ինչպես նաև հայերեն հաղորդումների օտարալեզու դրվագները (հատվածներ) հեռարձակվում են **հայերեն համաժամանակյա թարգմանությամբ՝ ձայնային կամ լուսագրային եղանակով:**

ՀՀ տարածքում հեռահաղորդակցության օպերատորի և հաճախորդի (օգտվողի) փոխհարաբերությունները հեռախոսակապի ծառայություններ մատուցելիս իրականացվում են **հայերենով:**

Գովազդի լեզուն.

ՀՀ-ում գովազդի լեզուն **հայերենն է:**

Անհրաժեշտության դեպքում, որպես լրացում, գովազդատուի հայեցողությամբ գովազդի շարադրանքը կարող է զուգորդվել նաև այլ լեզուներով՝ համեմատաբար փոքր տառերով: Գովազդի հայերեն շարադրանքը տեղեկատվության ծավալով չպետք է զիջի այլ լեզվով հրապարակվող տարբերակին:

Տեղեկատվական ցուցանակների լեզուն **հայերենն է:** Ցուցանակի հայերեն շարադրանքը կարող է զուգորդվել այլ լեզուներով նշված տեղեկատվությամբ, սակայն հայերեն շարադրանքը տեղեկատվության ծավալով չպետք է զիջի այլ լեզվով շարադրված տարբերակի ծավալին:

Ցուցանակի այլ լեզվով շարադրանքը պետք է լինի հայերեն շարադրանքից ներքև կամ աջ հատվածում:

ՀՀ լեզվական քաղաքականությունն իրականացվում է պետական ծրագրով, որի հիմնական բնագավառներն են գրական հայերենի կանոնարկումը, ազգային փոքրամասնությունների լեզվական խնդիրները, կրթության համակարգը, Հայաստան-Սփյուռք հարաբերությունները, օտար լեզուների ուսուցման համակարգը, պաշտոնական խոսքը, զանգվածային լրատվության միջոցների լեզուն, հրապարակային գրվածքները:

Ծրագրի նպատակներն են.

ա) պետության ինքնիշխանության ամրապնդման համար պետական լեզվի՝ հայերենի փաստացի գերակայության ապահովումը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում՝ որպես մեր երկրի ազգային անվտանգության գործոն,

բ) ՀՀ բոլոր քաղաքացիների՝ մայրենի լեզվով կրթություն և դաստիարակություն ստանալու իրավունքի ապահովումը,

գ) գրական հայերենի կանոնարկումը,

դ) պաշտոնական խոսքում գրական հայերենի անաղարտության ապահովումը,

ե) Սփյուռքի հայապահպանմանն աջակցելը, հայկական ընդհանրական մշակույթին պատկանելու գիտակցության ամրապնդումը,

զ) ՀՀ քաղաքացիների՝ օտար լեզուների իմացության բարելավումը,

է) լեզվական հաղորդակցության միջոցով այլ քաղաքակրթությունների հետ մեր հասարակության երկխոսության և համագործակցության զարգացումը,

ը) աշխարհին հայ ժողովրդի՝ իբրև ուրույն լեզվամտածողության և ինքնատիպ քաղաքակրթության կրող ներկայացնելը:

ԼԵԶՎԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Լեզվի բնագավառում պետական կառավարում և վերահսկողություն իրականացնող մարմինը ՀՀ ԿԳՆ **Լեզվի պետական տեսչությունն է:**

Տեսչության նպատակներն ու խնդիրներն են՝

ա) ՀՀ-ում լեզվի բնագավառում միասնական քաղաքականության իրականացումը,

բ) «Լեզվի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ լեզվական քաղաքականության պետական ծրագրի պահանջների կա-